

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՊՐԱՆՈՒՄԻ ԶԱՏՈՒԳՄԱՆ ԳՈՐԾԸ ՆԹԱԳՈՒՄ ԱՆՁԱՆՑ
ԳՈՐԾՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿՈՒՆԸՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԿՏՈՒՄԱՅՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ
ԲՅՈՒՐՈՒ

1. Սույն ուղեցույցը նախատեսված է ԱԴԴԱ պատահարում ընդգրկված տուժողի, ապահովագրի (ավտոմեքենայի սեփականատիրոջ կամ պատահարի ժամանակ այն օրինական հիմքով տիրապետած այլ անձի), և վարորդի համար, ովքեր այսուհետ ուղեցույցում անվանվում են Կողմեր: Ուղեցույցի նպատակն է Կողմերին հակիրճ ներկայացնել հատուցման գործընթացում ապահովագրական ընկերության կողմից ստացվող փաստաթղթերի և դրանց հետ կապված իրենց հնարավոր գործողությունների և իրավունքների վերաբերյալ:

2. Տուժողի կողմից ներկայացված հատուցման դիմումը կարգավորելիս ապահովագրական ընկերությունը Կողմերին պետք է ծանուցի հետևյալ փաստաթղթերն ու նյութերը՝



ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) որոշումը կամ դրա լուսապատճենը



պատահարում մեղավորության որոշման եզրակացության պատճենը կամ լուսապատճենը՝ դրա համար հիմք հանդիսացող բոլոր փաստաթղթերով և նյութերով



պատահարի հետևանքով տուժողին պատճառված վնասի փորձաքննության եզրակացության պատճենը կամ լուսապատճենը,



վերանորոգող կազմակերպությունների ցանկը՝ կազմված առնվազն 3 վերանորոգող կազմակերպություններից (սույն ցանկը չի ներկայացվում, եթե հատուցման վճարումը մերժվել է կամ վնասի գնահատումն իրականացվել է մնացորդային արժեքի մեթոդով)



սույն ուղեցույցը կամ դրա էլեկտրոնային տարբերակը


3. Այն դեպքում, երբ ծանուցված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ծանուցվող կողմն իրավունք ունի իրեն ծանուցած ապահովագրական ընկերությանը պահանջ ներկայացնել՝ պակասող փաստաթղթերը ստանալու համար:

4. Ծանուցվող անձանցից ցանկացածն իրավունք ունի անհամաձայնություն հայտնել պատահարի վերաբերյալ ծանուցված փաստաթղթերի վերաբերյալ էջ 4-ում նշված կարգով և ժամկետներում՝ համապատասխան բողոքարկում իրականացնելու միջոցով: Կրկնակի փորձաքննությունների անցկացման պայմանները սահմանված են ուղեցույցի էջ 5-ում:

5. Ապահովագրական հատուցումը կատարվում է գումարի վճարման կամ վնասված գույքի վերանորոգման միջոցով՝ ըստ տուժողի ընտրության (բացառությամբ այն դեպքերի, երբ վերանորոգումն ըստ Բյուրոյի կանոնների, հնարավոր չէ կամ ողջամիտ չէ, որի դեպքում հատուցումը կատարվում է գումարի վճարման միջոցով): Այն դեպքում, երբ հատուցման ստացման դիմումում կամ հատուցման որոշման մասին փաթեթի ստացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, տուժողը որևէ տարբերակ չի ընտրում, ապա ապահովագրական ընկերությունը տուժողին հատուցումն իրականացնում է գումարի վճարման միջոցով: Վերանորոգման տարբերակի դեպքում տուժողն ընտրում է վերանորոգող կազմակերպություն՝ հատուցման որոշման մասին փաթեթով ծանուցված վերանորոգող կազմակերպությունների ցանկից:

6. Կողմերն իրենց բողոքները, հաստատումները և ցանկացած այլ հարցորդակցումները կարող են իրականացնել առձեռն՝ դրանք բողոքարկումն ընդունող կազմակերպության գլխամաս կամ մասնաճյուղի տարածք ներկայացնելու միջոցով (ներկայացնելով նաև անձը հաստատող փաստաթուղթը) կամ էլեկտրոնային եղանակով՝ ծանուցումը ստացած միևնույն էլեկտրոնային հասցեից ծանուցումն ուղարկած միևնույն էլեկտրոնային հասցեին պատասխանելու (ուղարկելու) միջոցով:

7. Հատուցման գործընթացի ամբողջական կարգավորումների մանրամասներին կարող եք ծանոթանալ Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի www.apra.am ինտերնետային կայքում:



ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԿԼԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԿՃԱՐԻ ՉԱՓԸ

